



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6044



Eche. 7/npd  
18.90

# ԿԱԿԾԱՆՔ

345

ՏԵՏՐԱ. 1

Գրեց  
ՀԱՅԿԱԿ Յ. ԷԿԻՆԵԱՆ



ՆԻԽ ԵՈՐՔ

ՊԱՐՊՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

1890.

323.1(47.925)

5-36

2010

23-1(47.925)

5-36

# ԿՈԿԾՈՒՆՔ

ՏԵՏՐԱ.

ԳՐԵց  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱԿԱՆԱՎՈՐԻ



ԴԻԱ ԵԱՐՔ  
ՏՊԱԳՐԱԿԹՈՒՆ ՀԵՂԻՆԱՎՈՐ  
1890.

2001

# ԿՍԿԾԱՆՔ

Հեռու, հեռու...

Ովկիանոսի փրփրագէզ ալիքներուն  
ետև, քաղաքակիրթ Եւրոպիոյ աչքերուն  
մտիկ, Հայաստանի աւերակներէն կը լըս-  
ուին այն սրտկառուր ձայներն որք աղիք-  
ներ կը գալարեն :

Այդ նուիրական աշխարհի անմեղ  
զաւակներն են որ իրենց անմեղութեան  
համար կը չարչարուին անխնայ վարագ-  
գաղանաց արիւնութ ճիրաններուն մէ :

Ուրիշներ չկան օդնութեան համոզ,  
ուր ես դուն, Հսյու զաւակ. մի՛ դանդա-  
զիր, Հոգէգ սիմես, վազէ՛ ընդ փայթ,  
գաղաններ մտած են մեր նախահարց հօ-  
տին մէջ :

Մեր Հայրենեաց հովիւներն անփոյթ  
կը ննջեն օտարաց հրապոյրներէն արբշիու-  
ոչխարք կոչուած են այժմ հովիւներուն  
պաշտօնն կատարել :

Ա Ա Ի Է Ր

Հայաստանի համար այրող սրտերու

52802-ակ



39946-67

Բարբարոս Քուրդի թուրն ու բարե-  
րար Սուլթանի հաւատարիմ ժառաներու-  
սիւխներն մեր քերց ու եզրարց սրտե-  
րուն մէջ միւռած կը կենան. Նոցա վեր-  
քերէն ցայտող արդար արիւնն վրէ՛ժ կը  
գոռայ, և օգնութիւն կը խնդրէ. Միթէ  
դու զայն չե՞ս լսեր, խիզախ երիտասարդ:

Օտարէն մի՛ ակնկալեր օգնութիւն.  
Ինչոր քեզ անկ է ընել, մի՛ սպասեր ուրի-  
շէ, վասն զի դուն ես քո պատւոյ տէր,  
և դու միայն պարտիս լինիլ քո իրաւանց  
նախանձախնդիրն անվեհեր.

Սակայն քո բոլոր իրաւունքներն ու  
պատիւ բարբարուներու ոտից կոխան են  
դարձեր. Արի՛ ուրեմն, Հայաստանը արեան  
մէջ խղդուեցաւ. Տիգրիսն ու Եփրատը  
կարմիր հեղեղներ տարին յՈվկիան՝ տա-  
րաբնակ Հայոց ուշադրութիւնը գրաւե-  
լու համար. Օտարներն ի գութ շարժե-  
ցան, ու քարսիրտ անձինք յարտասուս  
վղձկեցան մի պահ ի տես ծովուց ար-  
իւնաներկ ջուրց անհուն. Դու ինչ ըրիր  
արդեօք պանդուխտ Հայաստանցի . . . . .

—Եթէ քնացար անտաշրեր և մնջան-  
չեցիր մեր նախոհարց Աստուծոյն դէմ,  
քուէ այժմ մազքերդ՝ ելի՛ր որ երթանք  
Հայոց քաջաց մէծ բանակին համանելու :

Մասիսի խոր վիճին մէջ դաւերէ ի  
վեր շլթայտկապ բանտարկեալ հայ Առ-  
եւծը, փշբած գոլով զիւր կոպանքներ,  
պիտի սրունայ համնիիր զաւակաց առաջ-  
նորդելու և Հայոց թշնամեաց վերջ տո-  
լու համար:

Պիտի գողան այն անամօթ երկաթա-  
գործներն որսնք թնդացուցին շարունակ  
իրենց միջերն սալերու վրաց՝ քաջանց  
քաջին կապանքները ամրապնդելու հա-  
մար. Այն հաւատարիմ չնիկներ որոց ոս-  
կի աստամննք մաշեցուցին Արտաւազդի  
ժանգոտած շղթաներն սատակամահ պի-  
տի ընեն այդ իժի ծնունդներ :

Թո՛ղ գողան, մատնիջներ . . . .

Բայց գո՛ւ, ընկեր, արտորա քո պար-  
տակունութեանց մէջ Համբերելու ժամա-  
նակն անցեր է ապաքէն. Տես՛, Եհովան  
է որ ի բարձանց Մասեաց սրբոց կը խօսի

րունկած մորենիներու մէջէն պատգամներ  
տալով Հայկայ զաւակներուն։ «Շարժե-  
ցէ՛ք, կըսէ, Հայեր, որպէս զի դթամ  
ձեզ նորէն, ինչպէս որ դթացի ձեր [մե-  
ծանուն նախահարց։

Շարժեցէ՛ք, Հայե՛ր . . .

Թող իղուր տեղը Հայաստանցւոց դա-  
սալիքներն չի դոցեն իրենց աշքերն յե-  
րեւելս վառող մորենիին բոցերը չի տես-  
նելու համար. թող նոքա չի խցեն իրենց  
ականջներն չի լսելու համար պատգամ-  
ներն զոր Հայաստանի Աստուածն կորուայ  
երկինքէն կոչելով—

«Շարժեցէ՛ք, Հայեր . . .»

Տե՛ս, եղբայր, այն ալեզարդ Մար-  
դորէն որ Հայոց Սուրբ Լեռնէն վար կ'իջ-  
նէ հապճեալ Տամնաբանեայ նոր պատ-  
ուէրներու տախտակներն ի ձեռին։ Նորա  
աշքերն արտասուքով լեցուած են։ Ճա-  
կատը քոյտամի և սիրտը ցաւերով ծած-  
կուած է։ Հայոց Մովսէն է՝ անմահ Ներ-  
Սէլն է այն որ Եհովայի նոր պատուէր-  
ներն կը բերէ իւր հարազատ զաւակաց։

Ներսիսեան պատուէրներու առաջինն  
երկասյրի սուր մ'է խաչաղբօշմ որով մեր  
նախահարք իրենց դաբնիները դեղեցին։

Հայաստանի Աստուծոյն առջի պատ-  
ուէրն է որ սոկեքանդակ տառերով ար-  
ձանագրուած է այդ երկնային գործի,  
քի վրայ Եհովայի մատներով։ «Հայե՛ր,  
կ'ըսէ դա, պաշտեցէ՛ք ոյն Երկիրն ու Եկե-  
ղեցին որք սրբագործուած են ձեր Հարց  
ու Նախահարց արիւնով»։

Այո՛, Եղբարք, պաշտեցէ՛ք Հայա-  
տանն ու Հայաստանի կրօնն իրենց անկ-  
եալ վիճակին մէջ անդամ։

Սիրեցէ՛ք, Հայեր, և պաշտեցէ՛ք այն  
աշխարհը՝ այդ քստմնելի աեստրաններու  
թատերավայրն զոր ո՛չ Եղիշէի սոկի գրիչն  
կարող է նկարագրել, և ո՛չ Ռաֆայէլի  
ճարտար վրձինն՝ ըստ արժանւոյն պատ-  
կերել։

Հոն Գերեզմանական լոռութիւն կը  
տիրէ իւղի և մեզրի աշխարհին վրայ,   
Զուարթութեան և Երջանկութեան դրախ-  
տավայրն տիրութեան կեդրոնավայր մ'է

կարձուծ, մահու արհաւրսնաց ներքեւ :

Հոն քորքանդ քաղաքաց վլատակիներու տակեն, լերաց ու ձորոց միայնութեան մէջէն հոգեւորներու հառաջներ, վիրաւորեալներու և մոհոմերձ կուսանաց յուսահատ հեկեկանքներ կը լսուին տակտին :

Անխնայ թափուող անմեղ արիւնն ու վրդովեալ գերեզմանաց սուրբ տճիւններն ամէն կողմերէ վրէժ կ'աղաղակին :

Վրէժ կը դուռան մեր նախահարց հաղիներն երկնից բարձունքէն : Մասիս և Այրարատ արձագանք կ'ուտան այդերկնացին ձայներուն որք երկրորդուելով բաղմից էջմիածնի և վարագայ Ա. Վանուց գմբեթներուն մէջ թռչելով կերթան տարածուիլ ընդ ոլորտս աշխարհի, սարսափ ձգելու մահկանացուաց երակներուն մէջ :

Դեռ կը լսուին այդ արհաւրսնաց երկրին մէջ թռուրքի վայրագ կրից զոհելող հարիւրաւոր կիւլիւզարներու ողբոց ազաղակներն՝ ձիւնապատ անտառ-

ներու և ամայի լեռներու մէջէն :

Դեռ կը մսան հոն այն կրտկներու գէղեր որոց մէջ անմեղ Օհաններն ողջակէղ եղան Մալիգարէի հաւատացեալներուն հաճոյից :

Դեռ կը ծխան հոն այն գիւղերն ու գիւղաքաղաքներն որք հրոյ ճարակ եղան ամբարշտի զաւակաց ձեռամբ՝ Հայ քրիստոնեայ տարրը ոչնչոցնելու համար :

Այդ բոցերու մէջ այլող զոհերուն ճենճերը օդը լեցուցած է հոն, իսկ հրոյ ճիշաններէն ազատողք վիրաւոր ինկածիրենց հայունի տան աճիւններուն քով՝ վերջի շունչերնին կը փշեն անոք :

Հոն, քիչ հեռու, բացուած կերեկի լայնածաւալ ովկիսն մը անյատակ, որ ո՛չ վանի ծովն է նուիրական, և ո՛չ ալ պաշտելի Ծոփքն է ալեծուփ, թարէ՛, հեղուկ տարըն որ կազմած է այդ ծով, չէ թէ ջուր, այլ արիւն է Հայու . . . .

Տե՛ս այդ բարձրաբերձ լեռը որոյ գագաթն ամպերուն մէջ է կորսուած, այդ ծովին մօտիկ, կարծես Մասիսն է

կամ Արագածոն սուրբ որ հռն փոխադա  
բուած է Արարչի հրամանաւ՝ իր զուակաց  
աղեան պահապանն լինելու համար։ Ար-  
կային չէ . ո՛չ քար, ո՛չ փայտ և ո՛չ հողեր  
կը կաղման այդ ահագին զանգուած . . . .  
Հայ Սրբելու սոկորներ, սուրբ Նախա-  
հարց աճիւններ և առեանգետալ հայու-  
հեաց մարմիններ են որ դիլուած են հռն  
ի նախատինս ընդհանուր մարդկութեան,  
և մանտանդ Հայոց զուակոց :

Քարէ սակայն, հեռացի՞ր մի քիչ՝ տե-  
սարաններու ցաւալին տեսնելու համար .  
սակայն երկիւզածութեամբ փոխէ քու  
քոյլերն, որպէս զի մի գուցէ կոխուես  
քո պաշտելի հայրերուդ սուրբ աճիւն-  
ներուն վրայ :

Ողբալով անցիր, աղօթելով քալէ, և  
զայրացած փութա շարբարոս չարագոր-  
ծէն լրւծել քո արդար վրէժ, վրէժ-  
ինդիր Աստուծոյ հրամանին համեմոտ :

Փանի մը քայլեր ես բաւական են  
հասնելու հռն ուր բաղմաթիւ անկեալ-  
ներու մէջ երկնոյին չոգի մը կը տես-

նես աւծաթավայլ և արձակ մաղերով .  
Հրեշտակ մ'է այն սեեր հագած ու  
տիրագին, որ կը շրջի արհաւալից վայ-  
րերուն մէջ՝ հոգեալին ցուրտ քրտինքը  
սրբելու, և մեռեալին աչքերը գոցելու-  
համար։ Արտասուք խորին ակոսներ բա-  
ցած են անոր գունատ ու դալկահար  
երեսներուն վրայ :

Դու կը ճանաչես զայն, Հայաստանի  
զաւակ . մօտիկ գնա՛, և նետուիր անոր  
գրկաց մէջ . գորովագութ քո մայրն է  
սգաւոր . . . . Անոր վերջի խօսքերն  
ու լալեաց աղաղակնելին դեռ կը հնչեն  
անշուշտ քո ականջներուն տիւ և դի-  
շեր, ընկեր հայրենակից :

Դու մոռացած չես անշուշտ այն օրն  
տիրագին յորում վերջի մնաս բարեաւն  
ըսիր անոր և հեռացար քո Մայրենի Աշ-  
խարհէն տրտում և տիսուր, Աչքերուդ  
առջեւ կենդանի պատկեր մ'է ի հարկէ  
այն տիրագին տեսարանն յորում Նա  
փաթթուեցաւ քո վզին, համբուրեց ճա-  
կատդ ու այտերդ . սրբեց իւր դոզդո-

ջուն ձեռքելով քըսինքդ ու արցունքդ  
ուր իրաշու խառնուած կը վաղէին յոր-  
դահոս քո վարդագոյն այտերուդ վրայէ։  
Նա սեղմեց զըեղ իւր սրտին ։ յացաւ ու  
լոցաւ, և ալրասուաց հեղեղներ թափեց  
ծոցիդ մէջ։ և հուսկ ուրեմն օրհնեց ըղ-  
քեղ և թոզուց որ մեկնիս իր գրկէն, և  
ինքն աչքերը փակելով ինկաւ կիսամեռ։

Մի՛ մոռանար, բարեկոմ, այն վեր-  
ջի խօսքերն ոչք նորա բերնէն գուրս  
թռան այն պահուն, երբ նա իւր ձեռ-  
քերն գլխիդ դրած կ'օրհնէր զքեղ ըսե-  
լով—«Երթա՛ս բարեաւ, սիրուն զաւակ»,  
Եհովայ Աստուածը քեղ օդնական և ա-  
ռաջնորդ ըլլայ քո փշալից ճամբաներուդ  
մէջ։ Հայստանի Աստուծոյն աչքերն ու  
քո նախահարց հոգիներն՝ տիւ և գիշեր՝  
յերկնից հուկեն քու վրայ, հէդ և անփորձ  
պատանեակ։ Իսրայէլի Աստուածը թող  
կարապեա ըլլայ քեղ այնպէս որպէս ա-  
ռաջնորդեց Խորայէլի զաւակաց, անապա-  
տի ճամբորդութեան մէջ։ Գնա՛, ըսաւ,  
պանդուխտ եղիր օտար աստղերու ներ-

քեւ։ աշխատէ անխռնչ Հայու մը նման,  
և յիշէ՛ միշտ թէ քու կեանք և արիւն  
միայն Հայրենիքիդ կը պարտիս . . . .  
Մի՛ մոռանար, որդեակ, քո տառապեալ  
մայրիկդ ոգաւոր. գիտցիր թէ նա տիւ և  
գիշեր պիտի ողբայ և աղօթէ քեղ հա-  
մար Արարիչ Աստուծոյն առջև։ Մի՛ մո-  
ռանար Հայրենիքդ որ անհամբեր քո գա-  
լուտեան պիտի սպասէ, մի՛ մոռանար քո  
ծննդափայրն որ քեղ կեանք և արե շը-  
նորհեց։ մի՛ մոռանար, ուրացողներու նը-  
ման, այն Կրօնն ու Եկեղեցին որք քու  
նախահարց սուաջնորդներն եղան ու փա-  
ռաց գալինիներ հիւսեցին անոնց. մի՛ մո-  
ռանար և արհտմարհեր քո մայրենի ճոխ  
լեղուն որ ստեղծագործութեան դարերու  
գրօշմը կը կըէ, և որով Արարիչ Տէրը  
խօսեցաւ քու հարց հարանց նախահարց  
հետ. վերջապէս մի՛ մոռնար թէ քո նուի-  
րագործեալ Հայրենիք բարբարոս տաճ-  
կաց թշուառ գերին է. թող այս ճշմար-  
տութիւնն կենդանի պատկեր մը ըլլայ  
ոչքերուդ առջև. գիտցիր որ պիտի գայ

այն օրը յորում պիտի կոչեմ և զքեղ զ՛յն  
Աջոջելու համար . . . Արդ գնա՛ , զաւա-  
կըս , գնա՛ բարեաւ ու խաղաղութեամբ՝  
առանց խնայելու քո վշտացեալ մօր ար-  
ցունքներուն :

Հայոց սարեր , Հայոց ձորեր , Հայոց Կավ-  
կը կրկնէին քո մօր խօսքեր «գնա՛ , որդեակ ,  
յիշէ զիս» .  
Եդեմաբուղին Ափերահատ փրփրալով կը գո-  
ուայր  
«Եկեղեցւոյդ լեր անձնուէր , քո Հայրենիք մի'  
նայր» :

Եւ դու , Եղբայր իմ , ծունդի գալով  
յայնժամ աջ ձեռքդ վեր դէպ ի երկինք ,  
և արտասուալից աչքերդ դէդ ի Աստ-  
ուած բարձրացնելով երդում ըրիր բեկ  
բեկ ձայնով հաւատարիմ մնալ քո սիրելի  
մօր պատուէլներուն , և ի հարկին վազել  
համիլ Հայրենեացդ աղատութեան հա-  
մար կռուելու . . .

Եւ դու մեկնեցար վերջապէս՝ սէրդ  
ու սիրտդ գրաւ թողլով հոն :

Ահա այդ տառապեալ Մայրն է որ

զքեղ կը կոչէ այսօր , ընկեր հայրենակից  
նոյն ինքն է որ քու քերջ ու եղբարց ան-  
կենդան մարմիններուն մէջ կը շըջի ան-  
յոց : Աւ խտդ և հանդիսաւոր երդումդ  
որոց վկայ են երկինք և մարդիկ , միտքդ  
բեր այժմ և կտրիճ եղիր :

Թըրաց բարբարոս պետը Հայ արեան  
ժովերէ անցած՝ սուր ի ձեռին եկած կե-  
ցած է քո ողբացեալ մօր գլխին վերև  
Տես՝ , տես՝ , նու բարձրացուցած է զիւր  
մահացուցիչ գործի օդի մէջ՝ մահացու  
հարուածն տալու համար . . . Վատանդը  
մերձ է , կորուստն՝ անխուսափելի եթէ  
չը փութաս՝ ժամանակին՝ օգնութեան  
համնիլ . . .

Բայց դու տակաւին մտիկ կընես ան-  
շարժ . արդեօք արիւնդ սառա՛ծ է երա-  
կացդ մէջ . . . չե՞ս տեսներ վտանգն որ  
քո Հայրենեաց կեանքին կսպառնայ , Աչ-  
քերդ բա՛ց և տես թէ ինչպէ՞ս քո մայր  
անդութի սաքին ինկած՝ գթութիւն կը  
խնդրէ աղաղակելով «ինայէ՛ ինձ , Մար-  
գարեիդ սիրուն , որպէս զի զաւակիներս

տեսնեմ և այնպէս մեռնիմ. . . .

Գթութիւն անգթութեան ծնունդէն,

Տառապելոյն արիշն արցունքները  
փոխանակ կակղեցունելու բռնապետին  
քարացեալ սիրաը, աւելի կը պատեն անոր  
լպերը դեմքը գագանային բարկութեամիւ  
և դժոխային անգթութեամւ.

Ահա հարուածն. ահա վտանգն որ  
կը համնի Հայաստանի վերջի շուշն կու-  
զելու. Հասի՛ր, եղայլ, ալ հերիք է լը-  
ռութիւն. Ամօթ է անշարժ մնալ արձու-  
նի մը պէս երբ քո Մայր կ'աղաղակէ վրշ-  
տագին— «Ու՞ր ես, որդեակ իմ, օգնու-  
թեան հասի՛ր».

Բայց աւա՛ղ, լեռներ միայն պատաս-  
խան կու տան խուլ արձագանքով:

Բայց վերջապէս՝ յուսահատ և լքեալ՝  
արտասուալից և նուազեալ աշքերն դէսլ  
երկինք բարձրացուցած, և ի ծունր իջ-  
եալ Աստուծոյ առջև կը կոչէ Տանյոս/ո  
«Մարդիկ չկան. զաւակներս խուլ դար-  
ձան. ու՞ր ես, Առաջամաց, օգնութեան  
հասիր» . . . : ՀՍՍՌ-ԱՊՀ ՀՀ



